SCPEC
THE STATE COMMISSION
FOR THE PROTECTION OF ECONOMIC COMPETITION
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵՎ

ՎՐԱՍՏԱՆԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ ՀՀ ՏՄՊՊՀ), մի կողմից,

և Վրաստանի մրցակցային գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն), մյուս կողմից,

այսուհետ միասին՝ Կողմեր,

ցանկություն հայտնելով խթանել համագործակցությունը մրցակցային քաղաքականության և մրցակցային օրենսդրության կիրարկման ոլորտում,

նպատակ ունենալով ստեղծել հավասարության և փոխշահավետության սկզբունքների վրա հիմնված բարենպաստ պայմաններ երկկողմ հարաբերությունների զարգացման համար,

կարևորելով մրցակցային քաղաքականության իրականացման որոշիչ դերը Կողմերի պետությունների շուկայական տնտեսության արդյունավետ զարգացման խթանման գործում՝

համաձայնեցին ստորագրել սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

Հոդված 1
Հուշագրի նպատակը

Սույն Հուշագրի նպատակն է մրցակցության քաղաքականության և մրցակցային օրենսդրության կիրարկման ոլորտում Կողմերի միջև համագործակցության խթանումն ու ամրապնդումը:

Հոդված 2
Համագործակցության և փոխգործակցության շրջանակը

Կողմերի միջև համագործակցությունն իրականացվելու է Կողմերի համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հետևյալ հիմնական ուղղություններով ողջամտորեն հասանելի ռեսուրսների շրջանակներում.

ա) օրենսդրական զարգացումների և Կողմերի պետությունների մրցակցային օրենսդրության արդյունավետ կիրառման վերաբերյալ ոչ գաղտնի տեղեկատվության փոխանակում,

բ) ուսումնասիրությունների, դիտանցումների, վարչական վարույթների վերաբերյալ Կողմերի միջև փորձի փոխանակում, ինչպես նաև գործնական աջակցություն,

գ) Կողմերի մրցակցության մարմինների և ազգային կարգավորող մարմինների միջև հարաբերությունների վերաբերյալ փորձի և տեղեկատվության փոխանակում,

դ) ուսումնական այցերի և փորձագետների վերապատրաստման դասընթացների կազմակերպում,

ե) մասնակցություն Կողմերի կազմակերպած համաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումներին:

Հոդված 3
Հանդիպումներ

Կողմերը կձգտեն, ըստ անհրաժեշտության, հանդիպումներ (կամ էլեկտրոնային փոստով խորհրդակցություններ) կազմակերպել հետևյալ նպատակներով.

ա) երկկողմ հետաքրքրության առարկա հանդիսացող առանձին հարցերի և գործերի վերաբերյալ ոչ գաղտնի տեղեկատվության փոխանակում,

բ) ընթացիկ հարցերի, փորձի և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող նոր զարգացումների, երկկողմ համագործակցության զարգացման ուղղությունների ու հեռանկարների, ինչպես նաև սույն Հուշագրի շրջանակներում ընդգրկված այլ հարցերի քննարկում,

գ) ոչ գաղտնի փաստաթղթերի, ուսումնասիրությունների, գրքերի և այլ հրապարակված նյութերի փոխանակում:

Հոդված 4
Հաղորդակցում

Կողմերի միջև հաղորդակցումն իրականացվելու է անգլերեն լեզվով փոստով և/կամ էլեկտրոնային փոստով նշանակված կոնտակտային անձանց միջոցով կամ Կողմերի ներկայացուցիչների հանդիպումների ընթացքում:

Հոդված 5
Հանդիպումների կազմակերպում

Հանդիպումների օրակարգի, վայրի, ժամանակի և այլ գործողությունների հետ կապված հարցերը, ներառյալ ֆինանսական պայմանները, յուրաքանչյուր դեպքում սահմանվելու են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 6
Գաղտնիության պահպանում

Յուրաքանչյուր Կողմ ընդունում է սույն Հուշագրի շրջանակներում փոխանակված ողջ տեղեկատվության գաղտնիության պահպանման անհրաժեշտությունն իր ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 7
Եզրափակիչ դրույթներ

Սույն Հուշագիրը կնքված է Կողմերի միջև համագործակցությունն ամրապնդելու և զարգացնելու նպատակով և չի հանդիսանում միջազգային իրավունքով նախատեսված Կողմերի համար պարտադիր կատարման ենթակա համաձայնագիր և չի սահմանում Կողմերի համար որևէ իրավունք և պարտականություն: Ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի և իրականացվի որպես իրավունքների կամ պարտականությունների ստեղծում:

Սույն Հուշագրի մեկնաբանումից և կատարումից բխող վեճերը լուծվում են Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Կողմերը համատեղ կվերանայեն սույն Հուշագիրը նախնական խորհրդակցություններից հետո:

Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև դրա գործողության դադարեցումը:

Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս կողմին:

Սույն Հուշագրի գործողությունը դադարեցվելու է գրավոր ծանուցումը ստանալու օրվանից երեք ամիս հետո:

Ստորագրված է՝ 2017 թվականի փետրվարի 17-ին Երևանում, երկու օրինակից՝ յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն, անգլերեն լեզուներով, որոնք ունեն նույն իրավաբանական ուժը: Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների առաջացման դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն լեզվով կազմված օրինակին:

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

Արտակ Շաբոյան

Նախագահ

Վրաստանի մրցակցային գործակալություն

Նոդար Խադուրի

Նախագահ